

16.05.2016

Հարգելի գործընկեր,

«ՀԿ Կենտրոն» ՔՀԶ ՀԿ-ն ներկայումս իրականացնում է «Վանաձոր Ինֆոտուն» ծրագիրը:

Ծրագրի նպատակն է՝ նպաստել ՀՀ-ում տեղի ունեցող բարեփոխումների գործընթացի մասին տեղեկատվության և հանրային մասնակցության բարձրացմանը Լոռու մարզում:

Ծրագրի շրջանակներում **մայիսի 28-29-ին** Դիլիջան քաղաքում նախատեսվում է "Ինֆոտունը ավանդական եւ այլընտրանքային մեդիայի խաչմերուկում" թեմայով, "Բաց տարածք" մեթոդով հանդիպում: Վերջինս նպատակ ունի մեկտեղելու ՀՀ-ում մեդիա ոլորտի հիմնախնդիրներով մտահոգված և որոշակի ռեսուրսներ տնօրինող կառույցներին և անհատներին՝ միասին մտածելու, քննարկելու, լուծումներ գտնելու համար:

ՀԿ կենտրոնը սիրով հրավիրում է Ձեզ մասնակցելու հանդիպմանը:

Շնորհակալ կլինենք, եթե վերջինիս մասնակցելու Ձեր որոշման վերաբերյալ ՀԿ Կենտրոնին տեղեկացնեք մինչև **ս/թ մայիսի 23-ը**՝ գրելով ngoc.csd.ngo@gmail.com կամ զանգահարելով 091743315:

"Բաց տարածք" մեթոդի ձևաչափն իրենից ներկայացնում է երկարատև սուրճի ընդմիջում, որը հնարավորություն է տալիս մարդկանց առավել անկաշկանդ խոսել իրենց մտահոգող թեմաների մասին, գտնել համախոհների և նախանշել հիմնախնդիրների լուծման հնարավոր եղանակներ:

Բաց տարածքին կմասնակցեն շուրջ 35 ներկայացուցիչներ՝ ավանդական եւ ոչ ավանդական ՋԼՄ-ներ, մեդիա ոլորտի փորձագետներ, Վանաձոր Ինֆոտուն ծրագրի մասնակիցներ, ներկայացուցիչներ մյուս Ինֆոտուններից, տեղական պետական կառույցների հանրային կապերի պատասխանատուներ:

Բաց տարածքի արդյունքում կունենանք.

- առավել քան 6 քննարկված հիմնախնդիրներ իրենց լուծումներով,
- մասնակիցների միջոցով գրված և իրենց աշխատանքներն ամփոփող գիրք,
- մեդիա ոլորտի հիմնախնդիրների շուրջ ձևավորված ցանցեր,
- համախոհների մեծ դաշտ,
- նախագծեր՝ հետագայում իրագործելու համար:

Հանդիպումն իրականացվում է «Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը հնգամյա գործընթաց է, որը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային Ձարգացման գործակալության կողմից: Այն իրականացնում են Մեդիա Նախաձեռնությունների Կենտրոնը, Եվրասիա Համագործակցություն Հիմնադրամը եւ Ինտերնյուսը Երեւանի մամուլի ակումբի եւ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի հետ համատեղ:

Հարգանքով,

Արփինե Հակոբյան





«ՀԿ Կենտրոն» ՔՀԶ ՀԿ նախագահ



**Օրակարգ
 ԲԱՑ ՏԱՐԱԾՔ**

Ինֆոտունն ավանդական և
 այլընտրանքային մեդիայի խաչմերուկում

ԱՌԱՋԻՆ ՕՐ		28.05.2016
10:00 - 11:00	Մասնակիցների ժամանում Դիլիջան /գրանցում	<u>ՍՈՒՐՃ</u>
11:00 - 11:30	Ողջույնի խոսք: Ծրագրի ներկայացում	
11:30 – 12:30	"Բաց տարածքի" բացում: Թեմաների առաջադրում	
12:30 – 13:00	Մասնակիցների գրանցում ըստ սեսիաների	
13:00	<i>ՃԱՇ</i>	
14:00 – 15:00	Առաջին սեսիա	
15:00 – 16:00	Երկրորդ սեսիա	
16:00 – 16:30	Արձանագրությունների ցուցահանդես	
16:30 – 17:15	Հաջորդ քայլի նախագծում - առաջին սեսիա	
17:15 – 17:45	Հաջորդ քայլի նախագծում - երկրորդ սեսիա	
17:45-18:00	Աշխատանքների ավարտ /Հետադարձ կապ	
18:30	<i>ԸՆԹՐԻՔ</i>	
ԵՐԿՐՈՐԴ ՕՐ		29.05.2016
9:00 – 10:00	<i>ՆԱԽԱՃԱՇ</i>	
10:00 – 10:15	Օրվա նորությունները	
10:15-11:15	Նախագծերի ներկայացումներին նախապարաստում	
11:15 – 12:30	Նախագծերի ներկայացում	
12:30-13:00	Հետադարձ կապ /Հանդիպման գնահատում	
13:00	<i>ՃԱՇ</i> ՄԵԿՆՈՒՄ	